



ՀԱՅՆՆ

Հայկայ Շրջանն և տունն<sup>1</sup>:

Տևարք.

**Ա**յս օրս հանդիսաւոր ամէն վարժարանաց, յորում վարպետք և աշակերտք կը ներկայացընեն հասարակաց՝ դպրոցական տարւոյ մը ընթացիցը մէջ՝ իրենց փոխադարձ ջանից պտուղները. այս օրս, առիթ այնքան մաղթանաց և վարձատրութիւն այնքան աշխատութեանց, այս օրս հայոց ազգին համար շատ փառաւոր տարեդարձ մ' է: Սեր ազգային օրացուցին մէջ ամենէն մեծ և ամենէն սրբազան օրն է այսօր, անկորուստ յիշատակով մը զոր կը փափաքիմք թիւ մը քննել և բացատրել, հաստատ գիտնալով՝ որ մեր պատմութեան

հին ժամանակաց վրայ դառնալով աչք մը տալը հետաքրքրելի պիտի ըլլայ նաև օտարազգեաց և մասնաւորապէս Վաղղիոյ բնկացը՝ որք այս ժողովոցս մեծագոյն մասը կը գումարեն: Այն ազնիւ և կտրիճ Վաղղիայն, որ՝ արիական և պայծառ հայրենասիրութեամբ մը՝ կը տեսնայ առանց նախանձու բաղդաւորները, կը պաշտպանէ դժբաղդները և կը փութայ յօգնութիւն կարօտելոց, Վաղղիա ամէն ժամանակ ընդունել է և կ'ընդունի իր պայծառաշուք Սայրաքաղաքին մէջ ամէն ազգէ նուիրակներ, մանաւանդ արևելեան աշխարհքներէն, որ կու գան այս քաղաքականութեան մեծ ընդունարանէն առնելու ոյժ մը իրենց ազգութիւնը պահելու կամ նորո

<sup>1</sup> Այս ճառն ինչպէս գիտեն օրագրիս ընթերցողները, անցեալ տարի Մուրատեան Վարժարանին պարգևարաշխութեան հանդիսին օրը խօսուած է, և ահա առիկ ըստ մեր խոստմանը կը հրատարակենք զայն: Վաղղիական բնագիրը տպա

գրուած է ի Բարիզ կտրուոր ծանօթութեամբք հանդերձ. իսկ այս հայկական թարգմանութիւնը Մուրատեան Վարժարանին արգի աշակերտաներէն մէկուն երկասիրութիւնն է:

գելու համար : Արանի այս մեր Հայ  
 քաղթականին , որ կ'ընտանենայ և կը  
 կապուի այս հիւրասէր ազգին ամենէն  
 սրբազան և անլուծանելի կապով , որ է՝  
 ամենէն սուրբ և փառաւոր և ընդհան-  
 րական կրօնքին կապը : Արքեմն , ո՞վ  
 Տեարք , արևելքի մէջ Հայոց ժողո-  
 վուրդը Արևելեցոյ առաջին զաւակ ե-  
 դաւ , ինչպէս որ յԱրևմուտս ալ Վաղ-  
 ղիոյ ժողովուրդն կ'անուանի անորանիկ  
 Դոստոյ Եկեղեցոյ , և ազգապետն ԱՄԵ-  
 ՆԱՔՐԻՍՏՈՆ ԵԱՅ ՎԵՏԱՓԱՌՈՒԹԻՒՆ՝<sup>1</sup>  
 անգին կապ արևելքի ամենէն հին ազ-  
 գին և արևմտից ամենէն մեծ նոր ազգին  
 մէջ . երանի եթէ կարենան պահել  
 զայն , աւելի սերտ և աւելի ընդարձակօ-  
 րէն : Փառք կը սեպեմ ինձի և բոլոր  
 ՍՈՒՐԱՏԵԱՆ ԱՐԺԱՐԱՆԻՆ ըսել  
 իմ պատուելի հայրենակցացս , զոր ազ-  
 նիւ համակրութի մը ժողովեր է հոս ,  
 թէ այս սակաւածիւ հանդիսիս մէջ  
 կան ընտիր Վաղղիացիք արդիւնաւորք  
 գիտութեամբք և առաքինութեամբք .  
 և այս արժանաւոր անձանց ներկայու-  
 թիւնը , որոնց նախագահ բազմած է  
 Ճեմարանին պատուելի և անուանի կա-  
 ճառակցաց մէկը՝ նախանձաւոր պաշտ-  
 պան կրօնից , դպրութեանց և արուես-  
 տից <sup>2</sup> , անժխտելի վկայութիւն մ' է  
 իրենց բարեսիրութեանը մեր վարժա-  
 րանին վրայ : Տեարք Վաղղիացիք ,  
 կրնամ գծեզ ալ ապահովցնել որ իմ  
 պատուելի ազգակիցներս՝ որ ձեր քովը  
 նստած են՝ ներկայացնելու մեր սիրե-  
 լի աշակերտաց ծնողքը , անկեղծաբար  
 կը յարգեն այն գեղեցիկ ձիրքերը՝ ու-  
 րով Արտուած ձեր ազգը զարգարեր է :  
 Ա՛նձ համոզումն ալ ունիմ , որ այս սի-  
 րելի մանկունքս , առիթք մեր անդու-  
 ջանիցը , միայն անպտուղ զարմացմամբ  
 մը գոհ պիտի չըլլան , այլ նուիրեալք  
 յօժանդակութիւն և յօգուտ ( ) սմա-  
 նեան տէրութեան՝ որուն երախտագէտ  
 հպատակքն են , և հաւատարիմք իրենց  
 ընտանեացը փափագանաց , պիտի կա-

րենան առանց իրենց ազգութեան բնա-  
 տիպը այլայլելու , սեփականելու այն  
 ամենայն ազնուական ձիրքերը , որ հա-  
 ւաքուած կ'երևան ՚ի Վաղղիա : Այն  
 Սիւրբանութիւնն որուն պատիւ ունիմ  
 ընկեր ըլլալու , միշտ ցուցուցած է ա-  
 մենամեծ յարգ մը ազգային և կրօնա-  
 կան գաղափարաց միաբանութեանը ,  
 և այս երկու հիմանց վրայ է որ կը ջա-  
 նայ հաստատել զայս Արժարանս ալ ,  
 հիմնեալ լուսաւոր և աշխատասէր մար-  
 դու մը առատաձեռնութեամբք , որուն  
 միշտ պատուելի անունը տպաւորուած  
 է մեր սրտերուն վրայ , ինչպէս այս բնա-  
 կարանիս ճակատը ՍՄՈՒԷԼ ՍՈՒ-  
 ՐԱՏ : Եթէ այսպիսի համոզում մը հին  
 ալ չըլլայ մեր մէջ , ժամանակակից  
 պատմութիւնն , արդի դէպքերն մեզի  
 կը ցուցանեն բաւականապէս , թէ ժո-  
 ղովորոց անհրաժեշտ պէտքն , կը պա-  
 հանջեն զկրօնս իբրև սկիզբն քաղաքա-  
 կանութեան , և հայրենասիրութիւնը՝  
 իբրև հիմն բարեբաստութեան և պա-  
 տուոյ :

Այս մտածութիւններս կը խրախու-  
 սեն զիս հրաւիրելու այս պատուական  
 ժողովը որ մասնակից ըլլան այնպիսի  
 յիշատակի մը՝ որ Հայոց ազգին ամե-  
 նէն հին անցքերը կը յիշեցնէ : Աի-  
 րելի է մեզի այս ազգային յիշատակու-  
 թիւնը , և այնչափ աւելի սիրելի որչափ  
 որ Հայաստան բազմապատիկ և խիստ  
 փորձանքներէ անցնելով՝ փառաւոր ան-  
 ցելոյ մը յիշատակաց մէջ կը գտնէ միւ-  
 թարուութիւն ներկային համար , յոյս  
 ապագային և օրինակ երկուքին միան-  
 գամայն : Յանկալի է ինձի ալ այս յի-  
 շատակներուն վրայօք խօսիլ . յիշեցը-  
 նել ազգերնուս ամենէն հին ժամանակ-  
 ներէն հաստատուած հանդէսները և  
 տօները , մանաւանդ ՁՆԱՅԿԻՆ , որ է  
 ցեղապետ Հայոց ազգին , որուն հան-  
 դէսը այս օրս հաստատեալ է այսինքն  
 օգոստոսի 11<sup>ն</sup> : Այս օրս ոչ միայն Վա-  
 ւասարդ է Հայոց , այսինքն՝ Վոր տա-  
 ըւոյն սկիզբը , որ թէ կռապաշտութե  
 դարերուն մէջ մեծ հանդիսով կը սօ-  
 նախմբուէր , թէ Վրիստանէութեան

1 Գ.Պ. Majesté très-chrétienne.  
 2 Պ. Իսիդոր Դեյլոր : Le Baron Isidore Taylor.

գարերուն մէջ, և թէ նահապետաց ժամանակ, ոչ միայն ազգային թուականի մը սկիզբն է (որ թերևս բոլոր ազգաց թուականներէն ալ հին է), այլ է և որ յիշատակի Հայոց ազգութեան, Հայաստանի ինքնակաց հաստատութեանը, Երբորվթայ կամ (ըստ Ս. Վրոց) Իւելայ բռնութենէն ազատելով, քաջութեամբն և աստուած պաշտութեամբն Հայկայ՝ Յաբեթի կամ Երայ թողնորդոյն. թուական մը, որ մեզմէ 4351 տարի առաջ, կամ 2492 տարի Վրիստոսէ առաջ սկսած է. յայտնապէս կ'ապացուցուի այս բանս Հայոց սովորական թուականին անընդհատ շարունակութեամբը, որ թէպէտ և սխալ չափուած է, այսինքն շարժուն կամ քաղաքական տարիով (որ 365 օր է միշտ) այլ անով իսկ մեզի առիթ մ'է ստուգելու այն (Հայկայ) թուականը որուն վրայ է խօսքերնիս, և գտնարու զսկիզբն այն անուանի շրջանին զոր Երգիպտացիք Սորիական կամ Շնկան շրջան կ'ըսեն, և կամ շրջան 1461 հասարակ և 1460 յուլեան կամ նահանջաւոր տարիներու. ամէն անգամ որ այսչափ (1460-1461) տարիներու միջոց մը կը լեցուի՝ հասարակ և արեգակնային տարիներուն սկիզբը նոյն օրը կը հանդիպի. այս բանս է ահա որ Երգիպտացւոց տուաւ առասպելեալ փիւնիկ թուոյն զարձին կամ նորէն ծննդեան գաղափարը:

Այս շրջանը մեր հարբն ալ գիտէին և կ'անուանէին Հայկայ շրջան, չէ միայն 'ի յիշատակ այս քաջին, հապամանաւանդ իրմէ հաստատուած ըլլալուն համար: Երկու ամբողջ Հայկայ շրջանք անցած են. առաջինը, ինչպէս որ առաջ ըսինք՝ սկսաւ մեր ազգին կազմութեանը և հաստատութեանը հետ. երկրորդն լմնցաւ, զարմանալի բայց և ցաւալի զուգարդիպութեամբ, մեր ազգին ինքնակացութեանը կամ ինքնակատութեանը կորսուած տարին. վասն զի Վրիստոսի 428 թուականին էր, որ Հայկայ երկրորդ շրջանը լմնցաւ, նոյն տարին Հայոց Արշակունեաց թա-

գաւորութեան ալ վերջանալով՝ Հայաստան ինքնիշխանութենէ զրկուած այլ և այլ տէրութեանց տակ ընկաւ: Այն դժբաղդ օրէն 'ի վեր, այն երկու շրջանաց (2920 տարիներու) լմննալէն ետև երրորդ շրջանին բոլոր ընթացիցը մէջ, (որ քիչ ժամանակէն պիտի լմննայ), Հայաստան ոչ երբէք մի և նոյն տէրութեան մը տակ եղած է: Այս երրորդ շրջանը պիտի վերջանայ ասկէ 29 տարի ետև, Վրիստոսի 1888 թուականին, և չորրորդ մը պիտի սկսի, զոր աւելի երջանիկ կը բարեմաղթեմ ազգիս:

Հիմա մեր գլխաւոր դիտելիքը պարզելու համար, այսինքն մեր ազգութեան սոսնիս թուականը ստուգելու համար, հարկ է քիչ մը մանրամասն քննութիւն և քանի մը հաշիւներ ընել: Եւ այս ասով չեմ ուզեր, Տեառք իմ, ձեր ներդրամութիւնը ձանձրացընել և զձեզ չոր հաշիւներու անապատաց մէջ թափառեցընել. այլ կը թողում գիտուն Երգիպտացւոյ մը<sup>1</sup>, որ ներկայութեամբ կը պատուէ զիս, ցուցընելու Հայոց տուամարին կանոնը որուն վրայ մասնաւոր քննութեամբ աշխատեր է, և կը յուսամ որ քիչ ժամանակէն այս կարևոր գործքը, հասարակաց կ'ընծայուի: Եւսական ըլլայ ինձի յիշել հոս որ Հայոց մէջ Երգիպտացւոց պէս միշտ երկու թուական և երկու տարի ճանչցուած է. մէկն հասարակ տարիներով հաշուած, որուն տարեգլուխն միշտ կը փոփոխի, ամէն չորս տարի օր մը տարբերելով. օրինակի համար, հիմա (1859<sup>ն</sup>) մենք մեր քաղաքական կամ հասարակ (Հայոց) թուականին 1308 տարւոյն մէջն եմք, որ սկսեալ անցեալ օգոստոսի 19-31<sup>ն</sup><sup>2</sup> և պիտի վերջանայ այս օգոստոս 18-30<sup>ն</sup>. իսկ յաջորդ Հայոց տարին սոյն այս օգոստոս ամսեանս 19-31<sup>ն</sup> սկսելով պիտի լմննայ միւս օգոստոսի 17-29<sup>ն</sup>. իսկ 1888<sup>ն</sup>

<sup>1</sup> Պ. Երևարդ Տիւ Լորիէ:

<sup>2</sup> Այս երկու թիւերուն առաջինն է ըստ հին կամ արևելեան տուամարի, երկրորդն ըստ նոր կամ Լատին տուամարի:

Հայոց տարին պիտի սկսի օգոստոսի 11-23<sup>ին</sup>, ուսկից կը սկսի միշտ հայկական հաստատ կամ եկեղեցական տարին, որ և հաստատուն թուական մը կը կազմէ, և կ'ըսուի հին տօմար Հայոց<sup>1</sup> :

Արդ Հայկայ երրորդ շրջանէն վերջը կամ թէ 1888<sup>ին</sup> Հայոց երկու տարիներուն սկիզբը մի և նոյն օրը պիտի հանդիպին (11-23 օգոստոս), որ միայն 1460 արեգակնային կամ նահանջաւոր և 1461 հասարակ քաղաքային տարի հեղ մը կը հանդիպի : Այս է ահա Հայկայ շրջանն :

Հիմայ մեզի կը մնայ գիտնալ (և մեր քննութեանց առաջին նպատակն ալ այս է), թէ ինչո՞ւ արդեօք Հայոց նոր տարին 11-23 օգոստոսի հաստատուած է . և ինչո՞ւ Հայկայ շրջանն սկըսաւ (2492 տարի Վրիստոսէ առաջ) : Ասն զի, ինչպէս որ ամէնքը գիտեն, ոչ աստեղաբաշխական պարագայ մը և ոչ նոր եղանակ մը կը հանդիպին տարւոյն այս օրուանս մէջ, (այսինքն օգոստոսի 11<sup>ին</sup>), պէտք է ուրեմն ասոր պատճառը փնտռել պատմական դիպաց մէջ : Եւ նախ օտարազգեաց մէջ փնտրուելով 'ի հին պատմութեան, կը գտնանք իրացընէ Եգիպտացոց մէջ, (որ և մինակ հնութեամբք կրնան Հայոց հետ մըցիլ, և որուն հետ դեռ ուրիշ շատ նմանութիւններ ունին՝ որ դեռ լաւ ապացուցուած չեն), կը գտնանք այդ Եգիպտի ափանց բնակչացը մէջ, որ այս բարեբուդի գետոյն հարսանեաց տարեկան հանդէսը արդարև աշնանային գիշերահաւասարէն ամիս մը առաջ կը կատարէին, որ է ճիշդ 11-23 օգոստոսի, Հայոց տարեգլխին օրը : Ս'եր ազգն ալ այս տարեգլխին հանդէսներուն մէջ, կը տօնախմբէր հեթանոսութեան դարերուն մէջ ջրհեղեղին յիշատակը, ինչպէս ինչուան մեր օրերն ալ կը կատարուին, ջրի խաղերով և աղաւնի թոցընելով 'ի տօնի

1 Ջոր Յովէ . Սարկաւազ վարդապետն նորէն հաստատելով (և սկսելով յամին 1084) ըսուեցաւ նաև Սարկաւազայ տօմար :

վարդապետին կամ Այլակերպութեան Վրիստոսի . վասն զի մեր Սուրբ Հարք օգոստոս ամսոյն 16<sup>ին</sup> հաստատած էին այս տօնը, նոր տարիէն հինգ օր ետև . և նոյն օրը մեր հեթանոս նախնիք նըւերած էին իրենց Բստղիկ դիցուհւոյն, իսկ տարւոյն սկիզբն ունէր իր առանձին աստուածը : Բայց, թէպէտ և այս երկու եգիպտական և հայկական տօներն թէ օրերուն յարմարութեամբք և թէ յիշատակաց՝ յարաբերութիւն մը ունէին իրարու, 'ի վերայ այսր ամենայնի այս երկու հին ազգաց սորիական շրջանները մէկմէկու չէին համեմատեր, այսինքն նոյն օրը չէին սկսեր ու լմրնար : Բսկէ զատ այն հանդիսից տօնախմբութիւնները չեն ապացուցաներ օրուան ընտրութեան պատճառը, վասն զի այն օրը չմիաբանիր ոչ ջրհեղեղին սկզբանը և ոչ վերջանալուն հետ, և ոչ Եգիպտին ջրոցն աճմանը կամ նըւազմանը, և ոչ Շնիկ աստեղ արեգակնային ամբարձմանը հետ . ապա ուրեմն ուրիշ պատճառ պէտք է փնտրուել, թէ մեր Հայկայ շրջանին և թէ իր առջի օրուան համար :

Ս'եր հին տօմարագիրք և Յայսմաւուրք կ'ըսեն թէ յետ խառնակութեան լեզուաց ամէն Եգիպտացեաց կամ ազգացեաց Բաբելոնէն դառնալով այն երկիրը ուսկից ելէր էր կամ ուր որ կ'երթար գրաւելու, պատուիրեց իր հետևողացը որ տօնախմբեն հայրենիքը մտնալնուն տարեդարձը : Ս'եր Հայկ նահապետն ալ, կ'ըսեն, մտաւ Այլակերպարացիքը կամ (Սորգոմույ իր հօրը երկիրը օգոստոսի 11-23<sup>ին</sup> (ըստ ոմանց 13-25)) և հրամայեց որ նոյն օրը տարւոյն սկիզբը սեպուի : Ար հաստատեն դարձեալ, թէ այս դիւցազնը առաջին եղաւ տարեցոյց տալու իր նորածին ազգին, զոր և կը պահէ ազգն մասամբ անփոփոխ ինչպէս որ իրեն աւանդուեցաւ այն նախնական դարերուն մէջ :

Այս է ահա մեր մէջը օգոստոսի 11<sup>ին</sup> տօնին պատճառն : Իսկ Հայկայ թուականն կամ շրջանն հաւանաբար քիչ մը վերջը Բելայ յաղթելուն և

սպանմանը տարին հաստատեց Հայկ, որ եղաւ յամի 2492 Վրիստոսէ առաջ. ինչպէս որ կը ցուցնէ նաև հասարակ հայկական թուականին անընդհատ յաջորդութիւնն<sup>1</sup> : Սեր պատմութեան ժամանակագրութիւնն ալ (որ դժբաղդաբար բաւական ճոխ չէ այս հին ժամանակաց վրայօք,) կ'ընծայէ մեզի թուական մը՝ Հայկայ թուականին ցուցուցածին մօտ : Բայց մեր ինդրոյն համար աւելի պիտանին այս է, որ հին օտար ժամանակագրութիւնն ամենայն ճշդութեամբ կը համաձայնի Հայկայ թուականին հետ. վասն զի Վրիստոսէ և Արսեբիոս իրենց մանրամասն թիւերովը Բելայ թագաւորութեան վերջը կը նշանակեն վերոյիշեալ 2492 տարին Վրիստոսէ առաջ : Եւս համաձայնութիւնքս Հայկական թուականին և օտար ժամանակագրաց տուած թուականին հետ, և վկայութիւնք մեր սոմարագրաց և յայտմաւորաց կարծեմ բաւականապէս իրաւունք կու տան մեզի առանց տարակուսի ընդունելու Հայկայ շրջանին և մեր ազգութեան սկիզբը Վրիստոսէ առաջ 2492 տարին. և մեր ազգային գերագոյն տօնին համար օգոստոսի 11-23<sup>ը</sup>, որ այդ Հայկայ թուականին առաջին տարին շաբաթ օր մը կը հանդիպի, որ էր օր սըրբազան հին օրինաց կամ նահապետաց ատեն, և ասով ալ կրնայ հաստատուիլ մեր պատմաց աւանդութիւնը, որք Հայկայ գործոց մէջ գիւցազնական քաջութենէ վեր բան մ' ալ կը դիտեն, կրօնական դիմադրութիւն մը, ազատութիւն մը՝ ի բռնութենէ առաջին կռապաշտին՝ կամ անոր՝ որ Վատուծոյ վայրած պատիւը և պաշտօնը իր անձին կը սեփականէր : Եւոր համար այս տօնական օրս և հանդէսս մեզի կրկնապատիկ սրբազան և սիրելի է :

<sup>1</sup> Եւս թուականն որ միայն հասարակօրէն ծանուցուած և Հայոց թուական կ'ըսուի՝ տարբեր է ի Հայկայ թուականէն, թէ և անոր անհաստատ տարիներովը շարունակուած է, բայց շրջանին չի հետևիր. այլ Հայկայ Գ շրջանին 125օրդ տարին կը սկսի, որ է 552 Վրիստոսի թուականին :

Յետ այսչափ վկայութեանց աւանդութեան և պատմութեան և ազգային և օտար ժամանակագրութեան, զոր 40 դարէ ՚ի վեր ամբողջ ազգ մը ընդունել է, և հաստատել են մեր հոչակաւոր մատենագիրներն և Արեղեցական հարք, պէտք չէ վայելուչ սեպել, ընդունիլ և տօնախմբել այսպիսի յիշատակ մը, տօն մը, որ է Հայկայ. կամ յանդգնութիւն և անտեղութիւն չէ առասպել սեպել այն ամէն բանն որ պատմական ժամանակաց սովորական շրջանէն վեր կ'ելլէ, մանաւանդ երբ այնպիսի հին ժողովրդեան մը վրայ է ինդիրն որուն պէտք է դիմէ ամէն ժողովուրդ որ իր ծագումը փնտռէ, այսինքն մարդկութեան հայրենիքը, զերկիրն Ադեմայ : Ախտելէն (չհաւանիլ) դիւրին բան չկայ, բայց չկայ նաև աւելի դժուարին բան մը քան զիրաւամբք ժխտելն : Իսկ մենք կը հաւանիմք տեսնալ, (նաև յանձն առնելով ամենէն անաչառ քննութիւնն ալ) մեր հայրենեաց մէջ յետ Վշամայ և յետ Վոյի՝ Հայկ մը, և կ'ուրախանամք իր հանդիսին վրայ, որուն չեմք ալ վախնար հրաւիրելու բոլոր Յաբեթական ցեղին սերունդները, որոնք այն հին ժամանակը չունէին այնպիսի երեւելի գլուխ մը կամ ներկայացուցիչ մը ինչպէս էր Հայկն :

Սակայն մի կարծէք, Տեաքք իմ, թէ ինչ որ պատմութիւնն կամ աւանդութիւնն կը զրուցէ մեր Հայկայ վերայ, ամէնն ալ կ'ուզեմ հաւատալի սեպել տալ. այլ անտարակոյս եմ որ Հայոց ազգն ունէր գլուխ մը կամ նահապետ մը ժամանակակից Բելայ, Բաբելոնի աշտարակին շինութեան ատեն, որ այս շէնքին կործանմանէն վերջը եկաւ ապաւինեցաւ Վրարատայ երկիրը, որ անկէ ետև իր անուամբը կոչուեցաւ : Եւս անունը, ըստ վրաց ՆԱՍՍ, մեր մէջ կ'ըսուի Հայկ որ ըստ քերականական կանոնի լեզուիս Հ\* միավանկ բառին նուազականն կրնայ սեպուիլ. այս անուամբ կը ճանչնամք մենք մեր ազգը և ոչ Վրմէն կամ ՎրԱՄԵԱՆ, ինչպէս որ օտարագրիք կ'ըսեն : Արբեմն մեր

նահապետին անունն վերջադիր յօդով մը կը գրուի Հայկն, մանաւանդ երբոր զՍրիոն նշանակէ. վասն զի այսպէս կոչուած է այս համաստեղութիւնը մեր Ս. Գրոց և Արեւելոց սուրբ և իմաստուն Հարց գրուածոց մէջ, որք հարկաւ ասով ազգային հին աւանդութեան մը կը հետեւէին, ուսկից հաւանական է որ Յոյք հնարած ըլլան իրենց Սրիոնի առասպելները. եթէ հարկ սեպելու ըլլանք որ այս երկու ազգերէն (Հայք և Յոյք) մէկը մէկալէն առած ըլլայ այդ աւանդութիւնը: Այն կարծիք ժողովրդեան և եթէ Հայաստանի վիպասանից շողոքորդութիւն, այս համաստեղութեան լոյսը նոր պայծառութիւն մը կու տայ Հայկայ իրական էութեան վրայ. այս էութիւնը հաստատապէս կը ստուգուի, շատ մը աշխարհագրական անուններով, որոնց սկիզբն 'ի պատմութենէ և յաւանդութենէ կ'ընծայուին մեր Վիւցազնին:

Սանաւորապէս Ս անայ հռչակաւոր բարձրաւանդակին վրայ կը գտնուին այս հին տեղուանքս, պայծառացած Հայոց Վահապետէն, որուն զաւակներն պահեցին երկայն ժամանակ, գրեթէ 120 ծնունդ որդոց որդի յաջորդելով, այն անունները և նաև երկրին առաջին շէնքերուն մնացորդները, որոնց մէջ հաստատած են ինչուան հիմայ իրենց ընտանի բնակութիւնները: Այս յիշեալ բարձրաւանդակս, 5-7000 ոտք բարձր է ծովու երեսէն, և իբր 3000 քառակուսի գաղղիական փարսախ տարածութեամբ, որուն քառորդը ծածկուած է աղի, խորունկ և գեղեցիկ լճով մը, որ արեւմտեան Միոյ լճերուն և արևելեան Արոսիոյ մէջի գտնուածներէն ամենէն մեծն է: Այս բարձրաւանդակը հողագնտոյս ամենէն նշանաւորներէն մէկն է շատ պատճառաւ. իր բնական կազմուածքը, թէ և դեռ երկրաբանորէն շատ անկատար քննուած է, կը ներկայացնէ շատ հրապուրիչ երևոյթներ երկրագիտի և բնախուզի համար: Ս անայ բարձրաւանդակն այն մեծ հրաբլիական գծին վրայ գտնուե-

լով, որ կը պատէ գերկրագունտը հարաւային արևելքէն դէպ 'ի հիւսիսային արևմուտք, շրջապատեալ է ինքն ալ հրաբլի լեռներով, թէպէտև մարած են, բայց վերջի բորբոքումը դեռ երկրաբանական օրուան մը առաւօտը կամ առջի իրիկունը հանդիպած կրնայ սեպուիլ. վասն զի Վրիստոսի 1441 թւականին կը յիշուի լեռան մը ճայթումը, որուն Վերրովթայ անունը կուտան մինչև հիմայ (Վարուտ տալը), որ և շատ խառնարաններ կամ բաժակներ ունի անուշ ջրով լեցուած: Ս անայ հրաբուղիներէն ամենէն մեծին (Սիփան լեռ) վրայ դեռ ծծմբային արտաշնչութեանց հոտը կ'աւնուի: Ա ճին բոլոր շրջապատն (որ շատ ընդարձակած է Հայկայ ժամանակէ 'ի վեր), կը ներկայացնէ նկարավայել գեղեցիկ տեսարաններ, և երբեմն նաև խոժոռ և ահարկու տեսիլ, վասն պակասութեան դալարեաց. լճին կղզիներէն մէկ քանին ծածկեր է ժամանակն մանաւանդ թէ անյագ ալիքներն, որոնց մէջէն իրենց գազաթունքը կը բարձրայնէին, հրելով վանքեր և բազմամարդ գեղեր. դեռ չորս հատ մնացեր են դարերէ 'ի վեր կրօնից և ներանձնական կենաց նուիրեալ մարդկան բնակութիւն եղած: Տասնի չափ քաղաքներ և 150 գեղէ աւելի կան լճին շրջապատը. որոնց շատին մէջ բնակութիւն կայ, ոմանց ալ աւերակներ՝ հայկական և սառակինեան ճարտարապետութեց հարստութեամբը, որք մեծ և աշխատելի քննութեանց լայն ասպարէզ մը կ'ընծայեն հնագետի մը. վասն զի կրնայ հոն գտնալ ամենէն խոր հնութեան մնացորդներ, սկսեալ Ս անայ բերդէն՝ որ է ըստ հին հեղինակաց Շամիրամակերտ կամ քաղաք Շամիրամայ, (առաջին կին որ զմարդիկ քաղաքավարեց), սեպուհ ժայռերու վրայ, ուր Միոյ առաջին ինքնակալաց փառասիրութիւնն ուզեց իրենց անունը անմահացնել՝ հարիւրաւոր բեւաբանդակ արձանագրութեամբք, զոր առաջին անգամ օրինակեց Վաղղիոյ տերութենէ զըր-

կուած գիտուն մը՝ Շիւլց, որ իր հետաքննին եռանդեանն դժբաղդ զոհ եղաւ :

Բայց ես նպատակէս շատ կը հեռանամ եթէ ուզեմ մէկիկ մէկիկ անուանել այն ամենայն աւերակները և յիշատակները զոր հնութիւնն թողուցեր է հոն . քարաժայռերու վրայ ամփիթէատրոնի ձևով կտրուած աստիճանները և նստարանները, ջրհորները և ջրանցքները՝ նոյնպէս սրածայր բարձրաբերձ ժայռերու մէջ փորուած, ամբարտակներ և պարիսպներ խոր անդունդներու վրայ ձգուած, և գետեր որ արուեստական խողովակներով լերանց ծոցէն անցուցած են : Բայ բարձրաւանդակը որ արուեստով և բնութեամբ այսպէս զարմանալի է, աւելի գեղեցկացած է յաւերժ յիշատակաց արժանի Հայկայ գործքերով, որ դեռ կը հնչեն պատմութեամբ և աւանդութեամբ անուանի եղած շէնքերու մնացորդաց մէջ, ինչպէս են նախ և առաջ ամբողջ գաւառներ՝ որք լճին հիւսիսային և արևմտեան կողմը կը պատեն, որոց մէկն կ'անուանի Հայկայ մէկ որդւոյն անուամբը (Խոռ) ԽՈՌՈՒՈՒՈՒՆԻՔ, և միւսն իր թռուանը անուամբ (Բազ) ԲՁՆՈՒՆԻՔ, ուսկից և լիճն կոչուեցաւ ծով Բազունեայ : Ետքը Եբբրովթայ լեռն զոր առաջ յիշեցինք . տեղացիք կ'աւանդեն թէ Եբբրովթ ուզեր է լերան գագաթը պալատ մը շինել, որ կործաներ է վրէժխնդիր կայծակներով, և ընկղմեր է լերան վրայ բացուած վիհերու մէջ : Բայ լերան ոտքէն դէպ 'ի հարաւային կողմը կը տեսնուի երկայն շարք մը մեծամեծ ժայռերու զոր ռամիկն կ'անուանէ ՈՒՂՏՈՒ ԲԱՐԵՐ . վասն զի կ'ըսեն թէ Եբբրովթայ ուղտերն են ասոնք, որ լճին եզերքէն աւազ կը կրէին պալատին կամ բերդին շինութեանը համար, և Ետուծոյ բարկութիւնը զանոնք 'ի քար գարձուց, և հաւանորէն լերան հրաբուլխի սաստկութենէն փրկած կամ ժայթքած քարեր են : Լճին հարաւային կողմը ԿԱՊՈՒՏ ԿՈՂ բարձր լեռը կայ ջրերուն մէջ երկրնցած, հին

ատենէ 'ի վեր ճանչցուած իր երկաթի և կապարի հանքերովն . ասոր հարաւային կողմը մինչև հիմայ Բելու, այսինքն Բելայ (որ է Եբբրովթ) անուամբ գեղ մը կայ . աւանդութիւնն կ'ըսէ թէ այս հսկային դիակը հոն իջեցուցին : Լճին նոյն կողմը, բայց աւելի դէպ յարևելք ՏՇՈՂ գեղը կայ, ուր ըստ տեղական աւանդութեան, հսկային մարմնոյն մէջէն Հայկայ արձակած նետը քաշեցին, և բացուած ծակէն արևուն ճառագայթները կողմէ կողմ շողալով կը թափանցէին : Բաւասունէն աւելի ջուրեր առաւել կամ պակաս երկայն ընթացքով կը թափին լճին մէջ, ասոնց ամէնէն մեծն է Հորգումայ գետը, որ հիմայ Խոշապ կամ Բնգղայ գետ (Լճախլ չայ) կ'ըսուի, որուն աղբիւրներն թէպէտ և գտնուած չեն, այլ յայտնի է որ արևելեան կողմէն կու գայ և լճին հարաւային արևելեան անկիւնը կը թափի՝ գեղի մը քովէն՝ ուսկից իր անունը կ'առնու՝ Հորգում : Բայ գետին լայն և ընդարձակ ձորը (որուն մէջ դեռ 40<sup>էն</sup> աւելի հայաբնակ գեղ կայ) որ հին Հայկական անուններն պահած են, և քանի մը հատին վրայ կ'ըսուեն խոր հնութեան նշանք Հայկայ ժամանակէն 'ի վեր), այս ձորս կը կրէ ամենէն սիրելի և ամենէն սրբազան անունը բոլոր աշխարհի մը՝ որ գրեթէ Գաղղիոյ չափ ընդարձակ է, և կը կոչուի ՀԱՅԿԱՅ ՁՈՐ . անուն պարզ, միանգամայն և այնչափ վսեմ ուսկից աւելին չէր կրնար տալ նորածին ազգի մը առաջնորդն և հայրն որ տեսաւ այն հեռաւոր սահմաններուն մէջ իր կտրիճ զաւակները և թոռները պատերազմիլ իր քովը, աշխարհիս ամենէն ահարկութիւնամբոյն դէմ, սպաննել զնա և վատրկիլ առաջին յաղթութիւնը, որ և միանգամայն ամենէն օրինաւոր, ամենէն փառաւոր և ամենէն պիտանին եղաւ : Բայ զուտ հայկական ձորն 'ի վեր երթալով՝ պատերազմական դաշտին կեդրոնը կը հասնինք, և ամենէն պատուելի յիշատակարաններու՝ որ են իրեք տեղիք կամ իրեք շէնք ժամանա-

կակիցք և համանունք հանդիպած դէպքերուն . նախ Հայր ( Սէք ) գեղն՝ ուսկից որ ձորն ալ իր անունը կ'առնու , զոր մեր յաղթող Վիւցազն շինեց , նոյն իսկ պատերազմի ճակատին վրայ . անկից քիչ մը հեռու , դէպ 'ի հարաւ , Աստուածաշէն գեղը , որուն համար աւանդութիւնը կ'ըսէ , թէ հոս տեղս Մտուած երեցաւ Հայկայ , օրհնեց անոր աղեղը որ եղաւ իրեն գործիք փառաց , իսկ իր հակառակորդին համար զէնք մահու : Պատմութիւնը կը ճանչնայ զՀայկ առաջին և ամենէն քաջ աղեղնաւոր : Մյս երկու գեղերուն մէջ կը գտնուի գերագոյնն յիշատակարանաց , այսինքն ՆԱՅԱՅ ԲԵՐԴՆ . ամէն կողմէ զատուած բլուրի մը գագաթան վրայ , և իբր հրաշքով մը դաշտին մէջէն բարձրացած . այս բլրոյն բոլոր կատարին երկայնութեան վրայ կը տեսնուի կործանած բերդի մը պարիսպ , սրուն դեռ իրեք կամ չորս կարգ մեծամեծ քարերու կը մնան , կիկղոպեան շինութեամբ մը , թէպէտև կը գտնուին տաշածոյ քարեր : Ըրջապատին մէջ տեղը քարաժայռին մէջ խոռոչ մը կը տեսնուի , որ հաւանաբար ջրհորի տեղ փորուած է : Եւրոպացի ճանապարհորդներէն դեռ ոչ ոք մօտեցեր է այս հեռաւոր առանձին տեղւոյս , որ մարդկային յիշատակարանաց առաջին երեսին վրայ նշանուած է . օտարական մը չէ լսած այն խորհրդաւոր արձագանքն որ կը հնչէ Հայկայ դիւցազնական ձայնը մինչև յետին որդւոցը ականջը : Մարդ կը կարծէ թէ աստուածային արհաւիրք մը կը տարածուին հոն նախասահմանեալ ազգի մը սրբազան ծագմանը վրայ , և հանդարտ հոգի մը կը պտըտի՝ այն ազգին նախահարցը որուականներովն հովանացեալ հովտին մէջ : Մյս քանի մը գիտելիքս այս հետաքննելի տեղերուն վրայ , առած եմ իմ ընկերակիցներէս մէկէն <sup>1</sup> , որ տասը տարի մը առաջ պտըտած և գրեթէ աչքն ստուգեր է իր ազգին որորոցը . . . .

1 Յ . Հ . Ներսէս վարդապետ Սարգիսեան :

Բայց ինչ կը տեսնէք այդ որորոցին և այդ ազնիւ և կտրիճ ժողովրդեան աղբերականց քով . . . ՎԵՐԵԶՄԱՆԻՔ . և կրնամ ըսել մուտք և կորուստք խռովարար և անգութ ժողովրդեան մ'ալ : Մյն բլուրին ոտքը , ուր ինկաւ Բէլ իր ահեղ պատերազմողներովն , իր 60 հսկաներովն , հոն Հայկ իրենց վերջի բնակութիւնը փորեց , և անուանեց Վերեզմանք :

Իսկ ինքն կը կարծուի , որ քիչ մը ժամանակ ալ բնակած ըլլայ Վան քաղքին քով , վասն զի այս քաղաքիս ընդարձակ պարտէզներուն և այգեստաններուն մէջ , որ դէպ 'ի արևելեան կողմը կը տարածուին , Հայկաշէն անուամբ տեղ մը կայ , մօտ այն քարաժայռ բլրին՝ ուր շատոնց գտուած էին ձեռագործ այրեր և բեռաքանդակ արձանագրութիւններ . իսկ նորերս , դեռ անցեալ տարի , այս բլուրին ոտքը փորելով գրտան մեծայարգ հնութիւններ , մետաղէ ամաններ՝ նոյնպէս բեռաքանդակ ձեռքով , ոսկէզօծ կուռքեր , և նաև ձոյլ ոսկիէ գործուածներ , խեցեղէն անօթներ՝ անսովոր բաղադրութեամբ , որոնց մէջ գտնուեցան սերմանիք սովորականէն աւելի մեծ հատերով , որոնց դպչելով փոշի դարձան : Վանայ բարձրաւանդակին ծայրը , և իր արևելեան կողմը ձևացրնող լեռանց պատուարին մէջ որ հին ատեն Օարասպ կամ Օակրոս լերինք կ'ըսուէին , կայ և Քէ լէշէ լեռը , որ պարսկերէն ըսել է կապուտ սիւն կամ արձան , և 9,000 ոտք բարձր է , որուն քովէն հին ժամանակէ 'ի վեր ձամբայ մը բացուած է Հայաստանէն Պարսկաստան անցելու . լեռան գագաթը յիշատակարան մ'ալ կայ բեռաքանդակ գրերով , և իր ոտքը կամ քովը գեղ մը Հայկ անուամբ , զոր ասուրի մատենագիրք յիշած են :

Բայց այս ամենայն տեղերս որ մեր Վիւցազնին անունը կը կրեն , չէին իր հաստատուն բնակութիւնն , կամ սիրայօժար տեղերը և իր տիրական անթուր . այս ետքինս ուրիշ բարձրաւանդակ երկրի մը վրայ հաստատեց Մեծ

Հայաստանի կեդրոնին մօտ , և ոչ հեռու Արածանիէն , ( այսինքն հիմակուան Սուրատ չայ գետոյն աղբիւրներէն , որ է արևելեան Ափրատ ) . Այս դաշտին Հայկ այնպիսի անուն մը տուաւ , որ մէկալնոնց պէս լաւ յարմարած է , այսինքն անուանեց ՀԱՐՔ , որպէս զի ցուցընէ թէ հոն հաստատեցան անոնք , որք Հայոց ազգին հայրեղան . հոն տեղս աւան մ' ալ շինեց , որուն հարկաւ իր անունը տուաւ , այսինքն է ՀԱՅԿԱՇԷՆ : Վոյս գերմանացի ճանապարհորդը կը յիշէ այս դաշտիս մէջ որ հիմայ Ինուս կը կոչուի , գեղ մը Հայկ կամ Փայր անուամբ :

Իայց կարծեմ , Տեարք , այսչափ նիւթական յիշատակարաններ բաւական են հաստատելու Հայկայ հուծիւնը . սակայն ուր են պատմագրաց վկայութենէն զատ , ( որք գրեթէ երկու հազար տարիէ 'ի վեր այս Վիւցազնիս վրայ գրած են ) , ուր են անոնց պատմութենէն հին հատուածներ ուսկական կամ վիպասանից երգոց , որք կը հռչակէին երբեմն այնպիսի արժանի հօր մը քաջութիւնները : Սակայն բազմազար կը համարիմ զիս , ծանուցանելու այս բանասէր ժողովոյս , որ Հայկայ վրայ մեծ զիւցազներգութիւն մը նոր հրատարակուեցաւ մեր լեզուով , պատկառելի Բանաստեղծէ և երևելի քերականէ մը , որ է Հ . Ս . Արսէն Ս . Բագրատունի , միաբան մեր Սիւթարեան ընկերութեանը : Վառորդ գարու մը աշխատասիրելով այս սիրելի նիւթին վրայ , անմահ յիշատակ մը թողուց իր Վիւցազնին և անոր սերունդոց փառացը . հայկական դպրութիւնն մեծապէս կը պարծի ատոր վրայ , որ եթէ բանաստեղծական գեղեցկութիւնքը կրնայ վիճիլ այս աստուածային արուեստին ամենէն ճարտար վարպետներուն հետ , իր օրինակագիր հայրենի լեզուին յստակութեամբ և հարստութեամբ որ և է ազգի ժամանակակից մատենագրէ՝ վար չմնար :

Իայց ես , Տեարք իմ , բացատրելով ձեզի այսօր մեր ազգային հանդիսին

պատճառը , անոր վաւերականութիւնը , ապացոյցները , յիշատակարանները , ոչ այնքան կը դիտեմ կենդանացընէլ ինքնին իսկ ազնիւ և սիրելի յիշատակ մը , կամ հրատարակել զանիկայ օտարաց , որքան որ կը փափաքիմ բարձրանալ և հաւասարիլ այն պատուոյ և պարտուց զգացմանց , և այն սրբազան կնքոյն՝ որ յիս տպաւորեալ է : Իսա՞ծս լաւ բացատրելու համար , թոյլ տուք ինծի , որ յիշեմ դէպք մ' ալ , վերջին դէպք մ' ալ այն նիւթին՝ որուն վրայ ինչուան հիմայ կը խօսէի : Պատմութիւնն կ'ըսէ որ երբ Հայկ 'ի գետին կործանեց հասարակաց թշնամին , հրամայեց զըմուսել ու ներկել անոր դիակը և տանիլ իր բնակութիւնը , հարք գաւառը , և բլուրի մը վրայ թաղել զանիկայ որպէս զի միշտ տկարաց և տղայոց աչաց տեսարան ըլլայ : Իհա այսպիսի տեսիլ մը նկատելու կը հրաւիրեմ զձեզ այսօր , որդիք Հայկայ , սիրելի Սանկունք , որդիք Մարաբայ և Միւրաբայ , ձեր հայրերուն նոր երկրին վրայ . նկատել հպարտութեան , տգիտութեան և ամպարշտութեան անարգ կողոպուաները , որոնց վրայ յաղթանակ կանգնեցին իր նախահօրը և իր հօրամոյն որդոց ձեր հարցը ազնուական քաջութիւնն , իմաստութիւնն և աստուածապաշտութիւնն : Արչափ որ բարձր ըլլայ այն անարգութեան նշանակին՝ չկրնար հասնիլ ազգային փառաց սեանը և ոչ խարրսխին , զոր կանգնեց Հայկին , հաստատեցին իր արժանաւոր որդիքն , և պայծառացուցին իրենց քաջ խաչեմ և բարեպաշտ յաջորդներուն անուններն , որ 44 դարերու երկայն ընթացից մէջ հոն դրոշմեցան : Տեսնալով այդպիսի յիշատակարան մը՝ որ թէ և նուազ հսկայաձև , բայց աւելի սրտաշարժ և աւելի հին է քան զփարաւոնեան բուրդերը , չէն վաւեր ձեր սրտերն մարդասիրութեան , իմաստութեան և աստուածապաշտութեան ամենէն մաքուր զգացմունքներով՝ զոր կ'ազգէն և կը պատուիրեն ձեզ ձեր ազգին օրինակներն և վիճակն , ձեր ընտանեաց և վարպե-

տաց եռանդուն փափաքն , ակնկալու-  
 թիւն տէրութեանն որ զձեզ կը պաշտ-  
 պանէ իբրև հաւատարիմ հպատակ , և  
 այն տէրութիւնն որ կ'ընդունի զձեզ  
 իբրև հանձարեղ հիւրեր . ձեր տարի-  
 քին եռանդն և ազնիւ նախանձորդու-  
 թիւնն՝ որ իրաւամբ կը պահանջուի  
 ձեզմէ : Ձեր աննման դրութիւնն իսկ  
 այս քաղքիս մէջ , որ կրնայ անուանիլ  
 կեղրոն կամ սիրտ մարդկութեան , վա-  
 ուարան իմացական շարժման , կը պա-  
 հանջէ ձեզմէ նոր ջանք մ' ալ : Ի՞նչ  
 կ'ուզէ ձեզմէ նաև այս պատուական  
 ժողովս . բայց եթէ յիշեցնել ձեզի ,  
 որ ձեր կենաց ամենէն ազնիւ մասն ,  
 ձեր հիմակուան հասակն , ունին բարձր  
 պաշտօն մը կատարելու . և թէ ձեր  
 բոլոր ջանքը պիտի բանեցընէք վաստը-  
 կելու իրեք տեսակ դաստիարակութի :  
 Ղաստիարակութիւն մը մտաց , անոր  
 պատուական ձիրքը լաւ 'ի գործ դնելու  
 համար . դաստիարակութիւն մը սրտի ,  
 որ կը սովորեցընէ ձեզի փնտռելու ձեր  
 ընտանեացը , ձեր հայրենեացը և ձեր  
 ամէն նմանեացը շահը , ինչպէս թէ ձեր  
 անձինն ըլլար . և դաստիարակութիւն  
 մը հոգւոյ , որ կը ցուցընէ ձեզի վախ-  
 ճան մը այս աշխարհէս անդին . և կը  
 յայտնէ ձեզի հայրենիք մը՝ աւելի գե-  
 ղեցիկ քան զայն զոր ունիք երկրիս վը-  
 րայ . ընտրելոց կամ Ղստուծոյ որդւոց  
 ժողովք մը , որուն ապահովապէս կը  
 հասցընէ զձեզ ձեր սուրբ կրօնքին ճամ-  
 բան : Երախոյս առէք ուրեմն սիրելի  
 աշակերտք . այս օրուան ուրախութիւնն՝  
 պտուղ ձեր տարեկան աշխատութեանց  
 խառնուած ձեր ազգին ամենէն մեծ  
 հանդիսին , և ժողովոյս քաջալերու-  
 թեանը հետ , վառէ ձեր եռանդը յա-  
 ջորդ դպրոցական տարւոյն համար . այն-  
 պէս որ ձեր պայծառ յառաջադիմու-  
 թիւնն ամենեւին կասկած չթողու թէ  
 արժանի պիտի ըլլաք ազգային փառաց  
 յիշատակարանին վրայ ձեր անուններն  
 ալ գրելու , թէ ոչ իբրև վեհազունք ,  
 գոնէ իբրև մարդիկ բարեպաշտք , ի-  
 մաստունք և հայրենասէրք :

Առաքիւնի ու Քաղաքակիրք պատմանի :

Ա.

Գրոշմաճքին վախձանը .

Եսկէ քիչ տարի առաջ դեռ մսնուկ  
 էինք , վերջը մեծցանք տղայ եղանք ,  
 հիմա պատանի ենք ու քիչ ատենէն ե-  
 րիտասարդ պիտի ըլլանք ու վերջը մարդ-  
 ակ պիտի չունենանք , ոչ հայր , ոչ մայր ,  
 ոչ դաստիարակներ որ մեզի համար յոգ-  
 նին քրտընին , կարօտութիւննիս հո-  
 գան ու ամէն բանի մէջ մեզի առաջ-  
 նորդեն . մարդկանց ընկերութեան մէջ  
 պիտի մտնենք որպէս զի մենք ալ աշ-  
 խատինք ու մենք մեզմէ բանի գործքի  
 ետևէ ըլլանք :

Երդեօք ի՞նչ բանի աւելի պիտի փա-  
 փաքինք ան ատեն . արդեօք ազատ ըլ-  
 լալ և կամ թէ մեր վրայ աչք ունեցող  
 մը չունենալ . բայց ընդհակառակն ան  
 ատեն կապերնիս աւելի սաստիկ պիտի  
 ըլլան . ուրիշ մեծեր պիտի ունենանք  
 որոնք հօր մը ու մօր պէս գթած ու  
 քաղցր պիտի չըլլան . մեր սխալմունք-  
 ներուն պիտի չներեն ինչպէս տղայոց  
 կ'ընեն , և ոչ ալ խրատով կամ թեթե-  
 ու անցողական պատժով մը պիտի չխա-  
 լըսինք անոնց ձեռքէն :

Երդեօք հարստութեանց պիտի փա-  
 փաքինք . — ո՛հ , հարստութեանց փա-  
 փաքն ալ մեզի նորանոր ձանձրութիւն-  
 ներու , խռովութեանց , իղձերու ու  
 տհաճութեանց պատճառ պիտի ըլլան  
 եթէ ուրիշներուն հետ և եթէ մենք  
 մեզի հետ . և վերջը վերջը , միթէ կա-  
 րենա՞նք պիտի անոնցմով ուրիշներուն  
 սիրելի ու մեծարոյ ըլլալ : Եւ ոչ իսկ  
 զուարճութիւնները պիտի ըլլան մեր  
 վախձանը . վասն զի կը տեսնամ որ ա-  
 նոնք որ ժամանակնին այնպէսով կ'ան-  
 ցընեն , ոչ միայն յարգելի չեն , այլ և ոչ  
 որ անոնց աղէկութիւնը կ'ուզէ : Եւ այց  
 մենք կ'ուզենք որ ուրիշները զմեզ յար-  
 գեն , կ'ուզենք որ մեր նմանները զմեզ  
 սիրեն . վասն զի ասկէ աւելի աղէկ և